

16.33

Մ-20

ԲԺ. Գ. ՄԱՂԱՔԵԱՆ



# Ս Ն Ո Ւ Ն Դ

ԵՀ

ՍՏԱՄՈՔՍԻ ՀԻՒԱՆՊՈՒԹԻՒՆՆԵՐ



Պ Ի Ֆ Լ Ի Զ

ԷԼԵՖՏՐԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆ, ՊՈՒԽ. № 7.

1910

610  
134-UU

610  
134-UU

3d. q. U u ? u p b u n my

616.33 30 JUL 2010

Ս Ն Ո Ւ Ն Դ

68

# ԱՍԱՄՈՔՍԻ ՔԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ



Թ ի ջ լ ի զ  
ԵԼԵՔՏՐԱԿԱՐԺ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆՑԻ, ՊՈԼԻՑ. 7.  
1910

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ներքին բժշկականութեան մէջ առանձին ուշադրութեան արժանի են ստամոքսի հիւանդութիւնները, մանաւանդ այժմն, երբ կեանքի ժամանակակից պայմանների շնորհիւ ստամոքսի հիւանդութիւնները այնչափ յաճախ են պատահում:

Դիրքը կազմելիս մեր նպատակն է եղել մէկ կողմից ցոյց տալ հիւանդներին այն կանոնները, որոնց շնորհիւնրանք կարող են ազատուել կամ թեթևացնել իրանց հիւանդութիւնը, միւս կողմից առողջներին ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է նրանք խուսափեն այդ հիւանդութիւններից: Գրքի մէջ ի հարկէ միայն ընդհանուր կանոններ կարելի էր ցոյց տալ. ինչ վերաբերում է առանձին գէպքերին, բժշկի զործն է միայն՝ աչքի առաջ ունենալով հիւանդի առանձնայատկութիւնները ուղիղ ճանապարհի վրայ գնել նրան:

Վերոյիշեալ նպատակին աւելի կատարելապէս հասնելու համար մենք օգտուել ենք զանազան աղբիւրներից, որոնցից զլխաւորներն են—պրօֆ. Ռոզենհեյմի, „Общая діэтотерапія“, Boas-ի, Rosenheim-ի, Wedele-ի, Ooer-ի, մասնագիտական աշխատութիւնները և այլն:

Խճ. Գ. Մաղամեան

25-ն Յունիսի 1910 թ.

Թիֆլիզ

ԴԻԼԸԱ (ՊԱՀԵՑՈՂՈՒԹԻՒՆ, «ՓԱՀՄԻԶ»)

Դեռ ևս հին ժամանակ — Քրիստոսից էլ առաջ — բժիշկները մեծ ուշադրութիւն էին դարձնում զիհտայի վրայ: Այժմս, ինչպէս յայտնի է, բժշկականութեան մէջ առաջնակարգ տեղը բըռնում է զիհտեափիկ — առողջապահիկ բժշկանութիւնը: Կան շատ հիւանդութիւններ, մանաւանդ ստամոքսի և աղիքների, որոնք բժշկւում են համապատասխան զիհտայով: Մարդուս սնունդը բաղկացած է սպիտակուցից, օսլայից, ճարպից, անգործարանական աղերից և ջրից: Այդպիսի սնունդը ամենաօգտակարն է մարդուս համար, որովհետեւ մարմինն էլ հէնց նոյն բաղկացուցիչ մասերից է կազմուած:

Կաթը, ձուն, միսը, ձուկը, հացահատիկները,  
կանաչեղինը, աղը, ջուրը, պտուղները ևայլն,  
ևայլն -մթերքների և խմիչքների գլխաւոր ներ-  
կայացուցիչներն են, որ մենք վերցնում ենք  
բնութիւնից: Դրանցից միքանիսը մենք դորձ  
ենք ածում առանց որևէ փոփոխութեան են-  
թարկելու՝ ինչպէս կաթը, ձուն, աղը, ջուրը. իսկ  
միւսները՝ նախքան գործածելը անհրաժեշտ

այս կամ այն փոփոխութեան ենթարկել:

Մենք այդ մթերքները պատրաստելով, որ  
նոյնն էթէ փոփոխութեան ենթարկելով՝ նախ և ա-  
ռաջ աւելի դիւրամարս ենք դարձնում նրանց  
և թեթևացնում ստամոքսի աշխատանքը և ապա  
հարաւորութիւն ենք ստանում թէ բազմատե-  
սակ կերակուրներ պատրաստել և թէ աւելի հա-  
մեղ դարձնել մեր սնունդը:

Բացի կաթից, որ իւր մէջ պարունակում է  
ջուր, սպիտակուց, իւղ, օսլայ և անգործարանա-  
կան աղեր, միւս բոլոր ուտելիքները վերցրած  
առանձին առանձին՝ միսը, ձուկը, կանաչեղէնը  
և այլն, չեն կարող բաւարարութիւն տալ մեր  
օրգանիզմի պահանջներին: Այդպիսով մարդուս  
համար ամենայարմար սնունդը խառն սնունդն  
է: Մարդիկ անձնական փորձով մշակել են ի-  
րանց համար նպատակայարմար սննդական խառ-  
նուրդներ. օր. սպիտակուցից և իւղից բաղկա-  
ցած մսի հետ մենք գործ ենք ածում օսլայով  
հարուստ գետնախնձոր. սպիտակուցից և օսլայ-  
ից բաղկացած հացի հետ մենք ուտում ենք  
իւղ, պանիր, միս և այլն: Նոյն փորձերը ցոյց  
են տուել որ մարդուս սնունդը կանոնաւոր է  
միայն այն ժամանակ, եթե նա իր մէջ պարու-  
նակում է մօտաւորապէս 100 գրամ ( $\frac{1}{4}$  ֆ.)  
սպիտակուց, 400 գր. (1 ֆ.) օսլայ, 60 գր.  
(14 զօլոսնիկ) իւղ, մօտ 2 լիտր ջուր և 30 գր.

(7 գոլ.) աղեր:

Եթէ մարդ քիչ է ուտում— սննդի պակա-  
սութիւնից նա մաշւում, թուլանում է:

Շնորհիւ գիտնականների մենք այժմս մեծ  
մասամբ գիտենք, թէ ինչից է բաղկացած այս  
կամ այն ուտելիքը: Աւելի ամփոփ և պարզ գտ-  
դափար կազմելու համար մենք ներքե առաջ ենք  
բերում 2 ցանկ, որոնք ցոյց են տալիս սննդա-  
կան միջոցների կազմը:

Սակայն սնունդի դերը միայն դրանով չի  
սահմանափակվում. նա է, որ մեզ ոյժ է տալիս  
աշխատելու. նրա չնորհիւ է, որ մեր մարմնի  
տաքութիւնը մնում է միշտ անփոփոխ: Եթէ ա-  
ռողջ մարդու համար նշանակութիւն ունի մի-  
այն համապատասխան սնունդի քանակութիւնը,  
ապա ուրեմն հիւանդ մարդու համար, մանաւանդ  
ստամոքսի հիւանդութիւն ունեցողի համար ա-  
ւելի ևս նշանակութիւն պիտի ունենայ սնունդի  
յատկութիւնը, նրա սննդարարութիւնն ու դիւրա-  
րամարս լինելը:

Առողջ մարդն էլ երբեմն չի մարսում այս  
կամ այն կերակուրը, իսկ երբ մարդուս ստա-  
մոքսը հիւանդ է լինում, այն ժամանակ դժուա-  
րամարս կերակուրների թիւը աւելի ևս շատա-  
նում է:

Մինչև վերջին ժամանակներս մարդիկ փոր-  
ձով միայն որոշում էին ուտելիքի դժուարա-

մարս կամ դիւրամարս լինելը։ Սակայն սրանից  
մօտ 30 տարի առաջ Լէյբէն ուստինէ խողովա-  
կի (ՅՈՒԴԵ) շնորհիւ մնունդի դիւրամարսութիւ-  
նը որոշելու հիմքը դրեց։

Կատարելով իւր փորձերը առողջ մարդկանց  
վրայ, նա նկատեց, որ առողջ ստամոքսը չա-  
փաւոր ուժելուց 6—7 ժամ յետոյ դատարկւում  
է։ Զանազան կերակուրներ նշանակելով միևնոյն  
մարդուն և շարունակելով իւր դիտողութիւնները,  
նանկատեց, որ ստամոքսում տարբեր կերակուր-  
ների մարսողութեան համար տարբեր ժամանակ  
է հարկաւոր և՝ շատ քիչ բացառութեամբ, որ-  
քան դիւրամարս է կերակուրը, այնքան ևս կարձ  
է այդ ժամանակը։ Այդպիսով նրա և մի շարք ու-  
րիշ գիտնականների շնորհիւ մենք այժմս կերա-  
կուրների և խմբչների մեծամասնութեան մասին  
գիտենք, թէ նրանցից որն է դժուարամարս և  
որը դիւրամարս։

Վերի ասածներս աւելի հասկանալի անելու  
համար աւելորդ չեմ համարում առաջ բերել մի  
ցանկ, որ կազմուած է այդ փորձերի հիման  
վրայ։ Այսպէս օրինակ՝

Ստամոքսում մնում է

1—2 ժամ

Մաքուր ջուրը . . . . . 100 200 գրամ\*)

\*) 200 գր. մօտաւորապէս 1 թէյի բաժակ,  
Ծանօթ, հեղ.

Հանքային ջուրը . . . . .	200
Թէյը . . . . .	200
Սուրճը . . . . .	200
Կակաօն . . . . .	200
Գարեջուրը . . . . .	200
Եռացրած կաթը . . . . .	100 200
Բուլիօնը . . . . .	200
Թերխաշ ձուն . . . . .	100

## 2—3 ժամ.

Սերով սուրճը . . . . .	200 գր.
Կաթով կակաօն . . . . .	200
Ջուրը . . . . .	300 500
Գարեջուրը . . . . .	300-500
Եռացրած կաթը . . . . .	300-500
Հում ձուն, ձուածեղը . . . . .	100
Եփած հորթի ուղեղը . . . . .	250
Հում ուստրէն (устрица) . . . . .	72
Եփած սազանը . . . . .	200
Եփած գայլաձուկը (щука) . . . . .	200
» ձողաձուկը (треска) . . . . .	200
Եփած ծաղկաւոր կաղամբը . . . . .	150
» ձնեթեկը (спаржа) . . . . .	150
Գետնախնձորը . . . . .	150
Ալուբալիի կոմպոտը . . . . .	150
Ալուբալին . . . . .	150
Սպիտակ թաժայ և թէ քարթու հացը . . . . .	70

Թարմ և քարթու սուխարին	70
Կըենդէլները	70
Ալբերտի բիսկվիտը	50

## 3—4 ժամ.

Խաշած ճուտը	230
Տապակած կագաւը	230
Խաշած աղաւնին	220-260
Տապակած աղաւնին	19
Հում կամ եփած նչ-իւղոտ միսը	250
Եփած հորթի ոտքերը	250
Եփած վետչինան	160
Տապակած նչ-իւղոտ հորթի միս տաք կամ սառը	100
Հում բիֆտեքսը	100
Տապակած ֆիլէն	100
Եփած օրագուլը	200
Աղի իկրան	72
Քարալէզը (минога)	200
Սև հացը	150
Սպիտակ հացը	150
Ալբերտի բիսկվիտը	100.500
Խաշած բրինձը	150
Եփած գոնդիլը (кольраби)	150
Եփած գազարը	150
» սպանաղը	150
Վարունղի սալաթը	150

Բողկը	150
Խնձորը	150

## 3—5 ժամ

Տապակած աղաւնին	210
Տապակած ֆիլէն	250
Տապակած բիֆտեքսը	250
Ծուխ դրած (копченый) լեզուն	250
» միսը	100
Տապակած նապաստակը	250
Տապակած կագաւը	240
Տապակած սաղը	250
» բադը	280
Աղի տարեխը (селедка)	200
Եղիպտացորենի կաշան	150
Սիսեռի կաշան	200
Եփած բակլան	150
Այդ ցուցակը որոշ չափով օգնութեան կա- րող է համեմ բժիշկներին և նրանք՝ աչքի առաջ ունենալով հիւանդի առանձնայատկութիւնները կարող են համապատասխան ընտրութիւն անել այս կամ այն հիւանդի համար:	

---

## ՍՏԱՄՈՔԾԻ ԿԱԶՄՈՒԽԾՔԸ

Բերանից կերակուրը կամ խմիչքը սոսորդի միջով անցնում է դէպի որկորը և այնտեղից ստամոքսն ու աղիքները: Սոսորդը բերանի յետի մասն է: Որկորը, որ սոսորդի շարունակութիւնն է կաղմում, ներկայացնում է իրանից մի խողովակ 25—30 սանտ. երկարութեամբ և 2 սանտ. լայնութեամբ իսկ որկորի շարունակութիւնն է ստամոքսը:

Ստամոքսը, տանձի նմանութիւն ունեցող մի պարկ է, որի լայն յատակը գտնւում է փորի ձախ կողմում, իսկ ծռուած և նեղ մասը՝ աջ կողմում: Ստամոքսը հետեւեալ Յ մասերի է բաժանւում—մուտք, յատակ և ելք: Ստամոքսի  $\frac{3}{4}$  մասը դասաւորուած է փորի ձախ կողմում, իսկ  $\frac{1}{4}$ -ը աջ: Լիքը ստամոքսի ամենամեծ տրամաչափը 25—30 սանտ., դատարկ ստամոքսինը 18—20 սանտ. է: Յատակի լայնութիւնը 8—10ս., ելքինը 2—5 սանտիմետր: Ստամոքսի ծաւալը նոյնպէս միատեսակ չէ. սակայն այդ բանը գըլխաւորապէս կախուած է կաղմուածքից, հասակից, սեռից, վարած կեանքից կամ զբաղմունքի պայմաններից ևայլն: Յամենայն դէպս անհօրմալ է կոչւում այն ստամոքսը, որի ծաւալը 1700 ք. սանտ. աւելի է:

Ստամոքսի պատը բաղկացած է Յ մասից.

1. Լորձաթաղանթից, որի մէջ դասաւորուած են երկու տեսակ գեղձեր, որոնք արտադրում են մարսողութեան համար անհրաժեշտ ստամոքսի հիւթը: Այդ հիւթը բաղկացած է աղջրական թթուուափից, պեպինից և շիրոնի մակարդից:

2. Մկանների շերտից, որ բաղկացած է մկաններից. և

3. Շիճուկային (սերօզնայ) շերտից:

Ստամոքսի ամենագլխաւոր գերը կայանում է կերակուրը դէպի աղիքները շարժելու մէջ: Եթէ զգալի կերպով խանգարում է այդ շարժողութիւնը՝ լինի դա ստամոքսի մկանների թուլանալու թէ մեքենայական արգելքների շնորհիւ, օրգանիզմի սնունդը տուժում է:

Ստամոքսի արտադրական գործունէութիւնը նոյնպէս մեծ գեր է խաղում: Յայտնի, է որ ստամոքսի հիւթը նպաստում է սպիտակուցի մարսելուն, թէպէտե աղիքների հիւթը կարող է լրացնել այդ պակասը, բայց որովհետեւ առհասարակ ստամոքսի արտադրական գործունէութեան հետ խանգարում է նաև աղիքների նոյն գործունէութիւնը, պարզ է որ դրա շնորհիւ զգալի կերպով խանգարում է նաև օրգանիզմի սնունդը:

Ստամոքսի երրորդ, ծծող ֆունկցիան շատ չնշիննշանակութիւն ունի, որովհետեւ այդ ֆունկցիան մեծ մասամբ կատարում են աղիքները: Բայց և այնպէս օրգանիզմի համար ի հարկէ

աւելի նպաստաւոր է, եթէ ստամոքսը ինքը ևս  
ընդունակ է իւր գերը կատարելու:

Ստամոքսի նշանակութիւնը վերոյիշեալ Յ  
ֆունկցիաներով չի սահմանափակւում միայն:

Ստամոքսն է, որ ցոյց է տալիս մեզ քաղ-  
ցածութեան և կշտանալու զգացմունքը, որ մեծ  
նշանակութիւն ունի մնունդի համար: Հեշտ է  
երևակայել, թէ որպիսի խանգարումներ կարող  
են առաջ գալ, երբ խանգարւում է մնունդն ըն-  
դունելու կանոնաւորութիւնը:

Ահագին է ստամոքսի նշանակութիւնը նաև  
ջղային համակարգութեան վրայ:

Ո՞ւմ չէ յայտնի թէ ինչպէս է փոխւում  
մարդու արամագրութիւնը ստամոքսի որևէ  
խանգարման ժամանակ: Ստամոքսի հիւանդու-  
թեան հետ յաճախ նկատում ենք դլացաւ, գըլ-  
խալտոյա, սրտի բաբախում ևայն:

### ՍՏԱՄՈՔՍԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԻ ՊԱՏ- ՃԱՌՆԵՐԸ

Ստամոքսի հիւանդութիւնների պատճառնե-  
րի մէջ ամենագլխաւոր գերը խաղում են ուտե-  
լիքներն ու խմիչքները.

1. Ուտելիքների և խմիչքների բնականից  
աւելի կամ պակաս քանակութիւնը:

2. Սննդական միջոցների ուսակութիւնը՝  
ա) Ծանրը, դժուարամարս կերակուրներ.  
բ) Փչացած և խարդախուած մթերքներ.  
գ) Անչափ կծու, աղի, թթու կերակուրներ և  
այլն, որոնք գրգռում են ստամոքսի լործաթա-  
թաղանթը:

3. Կերակուրների ոչքաւարար ծամելը՝ վը-  
չացած ատամների կամ շտապ-շտապ ուտելու  
պատճառով.

4. Անչափ տաք կամ սառն խմիչքներն ու-  
ուտելիքները.

5. Թոյները.

6. Քթի, բերանի, սոսորդի, կոկորդի և այլ  
ախտաբանական արտադրութիւնները: Բոլոր վե-  
րոյիշեալ պատճառները՝ այսպէս ասած, ներ-  
քին պատճառներ են: Կան և արտաքին պատ-  
ճառներ—դա ցրտահարութիւնը և ջարդուածքն  
է (տրամա). Ի՞նչ գեր է խաղում ցրտահարու-  
թիւնը, կամ կարսղ է արդեօք դա ինքն ըստ ին-  
քեան ստամոքսի հիւանդութիւն առաջացնել  
—այդ առնուազը կասկածելի է. բայց և այն-  
պէս չի կարելի հերքել, որ ցրտահարութիւնը  
գուցէ իբրև նպաստող միջոց միայն կարող է  
առաջացնել ստամոքսի հիւանդութիւն: Դրան  
ապացոյց ամենօրեայ փորձը:

Նոյնը պէտք է ասել և տրավմայի (ջար-  
դուածքի) մասին: Մի կողմ թողնելով այն ջար-

դուածքները, որոնք անմիջապէս վնասում են ստամոքսը և չափից դուրս հազւագիւտ են, աւելի մեծ ուշադրութեան արժանի է հետևաբար ձնշումը:

Այդպիսի ձնշումը կարող է ստամոքսի ու աղիքների տեղափոխութիւն առաջացնել: Վերցնենք օր. աշակերտների յենուելը սեղաններին, երբ պարապում են, արհեստաւորների վատ սովորութիւնը՝ ձնշել ստամոքսը գործիքներով և այլն:

Այդ տեսակէտից մանաւանդ վնասակար են կանաց շորերը—կորսէթը, կապերը ևայլն: Մինչեւ այժմս մենք խօսում էինք այն պատճառների մասին, որոնք կարող են ստամոքսի զանազան հիւանդութիւններ առաջ բերել: Կայ մի հանգամանք ևս, որ արժանի է ուշադրութեան—դա՝ այսպէս ասած; բնածին, ժառանգական տրամադրութիւնն է դէպի ստամոքսի հիւանդութիւնները: Այդ դէպքում ստամոքսը թոյլ գործունէութիւն է ցոյց տալիս և ժողովուրդը ամենայն իրաւամբ այդպիսի ստամոքսը՝ «թոյլ ստամոքս» է անուանում:

Գիտութեան մէջ ընդունուած այն ֆակտորը, թէ հիւանդութեան տեղը բջիջն է, այսինքն թէ հիւանդութեան ժամանակ այս կամ այն գործարանը ենթարկում է զանազան փոփոխութիւնների անառոմիական տեսակէտից,

մասամբ միայն վերաբերում է ստամոքսային հիւանդութիւններին: Ստամոքսը մարմի միւս գործարաններից տարբերում է նրանով, որ շատ անգամ նրա հիւանդութիւնը, որ արտայայտում է որոշ սուբեկտիվ և մասամբ օբյեկտիվ նշաններով, չի ենթարկուում որևէ օրգանական փոփոխութիւնների, այնպիսի փոփոխութիւնների, որոնք մատչելի լինէին որոշման գիտութեան այժմեան միջոցների շնորհիւ:

Այդ տեսակէտից նրան նման են միայն սիրտն ու աղիքները:

Ահա թէ ինչո՞ւ ստամոքսի բոլոր հիւանդութիւնները երկու մեծ դասակարգերի են բաժնեւում:

I. Հիւանդութիւններ, որոնք առաջ են բերում որևէ անատոմիական փոփոխութիւն — այսպէս ասած՝ ստամոքսի օրգանական հիւանդութիւններ:

II. Հիւանդութիւններ, որոնք չեն առաջացնում որևէ անատոմիական փոփոխութիւն — ստամոքսի փունկցիօնալ հիւանդութիւններ:



## I.

ՍՏԱՄՈՔՍԻ ՕՐԴԱՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐ

Ստամոքսի սուր բորբոքումն (կատար)

Ստամոքսի սուր բորբոքումը, կամ ինչպէս ժողովուրդն անւանում է՝ «ստամոքսի խանգարում» առաջ է գալիս առհասարակ սնունդի անկանոնութիւնից: Այդ անկանոնութիւնը կարող է կերաբերուել սնունդի յատկութեանը, նրա քանակութեանը, կամ ընդունելու ձեի մէջ ևայլն: Ստամոքսը խանգարում է, եթէ օր. մենք գործ ենք ածում փչացած՝ ձու, միս, ձուկը, կալբաս, վետչինա, թթուած կաթ կամ գինի, կծուած իւղ ևայլն: Այդ փչացած մթերքները՝ մտնելով ստամոքսի մէջ, արտադրում են հոտած նիւթեր, գրգռում են ստամոքսի լորձաթաղանթը և առաջ բերում ստամոքսի սուր բորբոքումն:

Ստամոքսի գրգռումն և ապա բորբոքումն կարող են առաջ բերել բոլոր սուր և գրգռիչ բաները, ինչպէս նն՝ անշափ աղի, թթու, կծու ուտելիքները, գինու, արաղի շատ գործածելը, չմանրացրած, լաւ չծամած կերակուրը, խակ մրգերը, շատ տաք կամ սառը կերակուրն ու խմիչքները ևայլն:

Ո՞չ միայն սնունդի յատկութիւնը, այլ նրա քանակութիւնը ևս նշանակութիւն ունի ստամոքսի խանգարումն առաջացնելու մէջ: Անշափ շատ ուտելը, նոյնիսկ լաւ յատկութիւն ունեցող կերակուրներ, կարող է նոյնպէս ստամոքսի բորբոքումն առաջ բերել:

Այդ մենք յաճախ նկատում ենք տօներին, կամ հանգէսներից յետոյ, երբ ստամոքսի խանգարումը կարծես համաձարակի բնաւորութիւն է ստամում: Ծանրաբեռնուած ստամոքսը ուժասպառում է. նա չի կարողանում մարսել բոլորը, այլ կերակրի մի մասը մնալով ստամոքսում անմարս, սկսում է փտել և լուծուել, որից ստամոքսի լորձաթաղանթը զրգուում է և առաջ է գալիս սուր բորբոքումն:

Նոյնը մենք նկատում ենք նոյնիսկ շափաւոր ուտելուց յետոյ, եթէ մարդու ստամոքսի գործունէութիւնը թուլանում է: Այդ թուլութիւնը, ինչպէս ասացինք, կարող է լինել բնածին, ժառանգական. բացի գրանից ստամոքսի գործունէութիւնը թուլանում է քնած, հիւանդ ժամանակ ևայլն: Վերջապէս ստամոքսի սուր բորբոքումն առաջ է գալիս յաճախ վարակիչ հիւանգութիւններ եղած միջոցին, ինչպէս օր. քութէշի, տիֆի ժամանակ ևայլն:

Անատոմիական տեսակէտից ստամոքսի սուր բորբոքումն արտայայտում է նրանով, որ լոր-

ձաթաղանթը կարմրում և ուռչում է. նա սկսում է արտազրել մեծ քանակութեամբ լորձունք. ստամոքսի գեղձերը ենթարկում են որոշ փոփոխութեան, որի հետեանքը լինում է ստամոքսային հիւթի սովորականից պակաս արտազրութիւնը: Այդ բոլորի շնորհիւ ստամոքսի մարտողութիւնը խանգարւում է: Ամենից առաջ կորչում է մարդու ախորժակը, Շատ անգամ հիւանդը լսել անգամ չի ուզում կերակրի մասին. նրա բերանում համ չկայ և միայն աղի, թիւու և առհասարակ սուր բաները կարող են զրգուել նրա ախորժակը:

Եեղուն ծածկում է աղիտակ կամ գեղնագոյն փառով և ցամաքում է. բերանից վատ հոտ է գալիս: Հիւանդը ստամոքսում զգում է ծանրութիւն, ճնշումն և երբեմն ցաւ. նրա սիրալ շարունակ խառնուում է, կերածը քացխում. նա բխկում է և յաճախ ործկում: Գրգռուած ստամոքսը դուրս է նետում չմարսուած կերակուրը լորձունքի և մաղասի հետ խառնուած: Ստամոքսն առհասարակ կապ է լինում, թէն երբեմն ստամոքսի սուր բորբոքումը տարածուում է և աղիքների վրայ: Այդ դէպքում հիւանդը լուծում է:

Ստամոքսի բորբոքման ծանը դէպքերում խանգարւում է նաև հիւանդի ընդհանուր զրութիւնը: Հիւանդը թուլութիւն, գլխացաւ է զգում. նա կարծես ջարդւած լինի:

Շատ անգամ, մանաւանդ երեխաների հիւ-

ւանդութեան ժամանակ տաքութիւնը բարձրանում է: Հիւանդութեան ընթացքը չափազանց տարբեր է. թեթև դէպքերում հիւանդութիւնն անցնում է 1—2 օրում, իսկ ծանը դէպքերում կարող է շաբաթներ տևել: Սակայն ինչ և լինի հիւանդութիւնը շատ չնշին բացառութեամբ բարեյաջող ընթացք է ստանում: Հազուագիւտ, մահացու դէպքերը պատահում են միմիայն ծեր մարդկանց և ծծկեր երեխաների մէջ: Հիւանդութեան վտանգը կայանում է նրանում, որ մէկ անգամ պատահելով, նա աւելի հեշտութեամբ կը կնւում է, որից յետոյ կարող է առաջ գալ ստամոքսի յարատե բորբոքումն: Ստամոքսի սուր բորբոքումը բժշկում է մեծ մասամբ պահեցողութիւնով:

Առաջի օրը ոչինչ չպէտք է ուտել. կարելի է խմել քիչ-քիչ՝ սառեցրած թէյ, կաթ, գելթերի ջուր ևայլն, կուլ տալ մաքուր սառուցի փոքրիկ կտորներ: Ծանը դէպքերում, մանաւանդ եթէ հիմք կայ ենթագրելու որ ստամոքսում զեռ մնում է չմարսուած կերակուր, կամ երբ ործկումը յամառ կերպով շարունակուում է, հարկաւոր է մաքրել ստամոքսը: Դրա համար ամենից լաւ միջոցը՝ ստամոքսի լուացումն է: Նոյն նպատակի համար, մանաւանդ երբ ստամոքսի հետ բորբոքւած են լինում նաև աղիքները, բացի ստամոքսի լը-

ւացումից, կարելի է և համապատասխան լուծողական տալ:

Այսպէս թէ այնպէս, ստամոքսը մաքրուելուց յետոյ հիւանդի ախորժակը հետզհետէ բացւում է. բայց նայած դրան սկզբում անհրաժեշտ է չափից գուրս մեծ զգուշութիւն սնունդի կողմից: Առաջի օրերը կարելի է տալ՝ թէյ, կաթ, թերխաշ թարմ ձու, բուլիօն, թեթև արգանակներ (սուլպեր), սուխարի կամ Ալբերտի շաքարահաց (պечենյե) ևայլն: Իսկ այնուհետև կարելի է թոյլ տալ՝ եփած հաւի միս, ուղեղ, ձուկը, եփած հորթի ոտքեր, լեզու, հորթի միս և վերջապէս 1—2 շաբաթից յետոյ սովորական կերակուրներ: Հիւանդութեան առանձին նշանները, ինչպէս օր. — քացխելը, ործկալը, ցաւը, փորկապութիւնը երբեմն պահանջում են սիմպտոմատիկ բժշկութիւն:

### ՍՏԱՄՈՔՍԻ ՅԱՐԱՏԵՒԲՈՐՔՈՒԹՈՒՄՆ (ԿԱ- ՏԱՐԲ)

Մինչև վերջին ժամանակներս ստամոքսի համարեա ամեն մի երկարատև հիւանդութիւն ընդունում էր իբրև ստամոքսի յարատև բորբոքումն: «Ի՞նչ ասես որ չեն բժշկել և այժմս էլ դեռ չեն բժշկում իբրև ստամոքսի յարատև բորբոքումն, թէն պարզ է, որ այդ դէպքում կարող

է լինել ամեն ինչ, բայց ոչ բորբոքումն», ասում է յայտնի մասնագէտ Օգէրը: Չնայած զբան՝ ստամոքսի իսկական յարատև բորբոքումը դարձեալ բաւականին տարածուած հիւանդութիւն է մանաւանդ քաղաքներում:

Ստամոքսի յարատև բորբոքումը, ինչպէս վերև ասացինք, կարող է առաջ գալ սուր բորբոքումից յետոյ, կամ հետզհետէ իբրև ինքնուրոյն հիւանդութիւն:

Ստամոքսի յարատև բորբոքումը, իբրև ինքնուրոյն հիւանդութիւն, ամենից յաճախ առաջ է գալիս վատ և անկանոն սնունդից: Վատ յատկութիւն ունեցող սնունդը, չափից աւելի կամ անժամանակ և արագ ուտելը բնականաբար գըրգըռում են ստամոքսը և վերջիկերջոյ յարատև բորբոքումն առաջացնում: Բայցի դրանից ստամոքսի յարատև բորբոքումն են ստանում այն մարդիկ, որոնք շարունակ ի չարն են գործ գընում սուր խմիչքները, կերակուրները, ծխախոտը, սուրճը ևայլն, կամ նրանք, որոնք գործ են ածում շատ տաք կամ սառը կերակուրներ ու խմիչքներ:

Բոլոր վերոյիշեալ դէպքերում ստամոքսի յարատև բորբոքումը զարգանում է ինքնուրոյն: Բայց կան բազմաթիւ դէպքեր, երբ ստամոքսի յարատև բորբոքումը զարգանում է ուրիշ այլ հիւանդութիւնների պատճառով:

Այսպէս օր. ստամոքսի յարատև բորբոքումը

շատ անգամ ուղեկցում է ստամոքսի ուրիշ հիւանդութիւններին (կլոր խոց, քաղցկեղ և այլն): Նա կարող է հետեանք լինել սրտի, թոքերի, լեարդի, երիկամունքների և այլ հիւանդութիւնների: Ստամոքսի յարատե բորբոքումը յաճախ սովորական երեսոյթ է նաև՝ արեան պակասութիւն, թոքախտ, սիֆիլիս ունեցող մարդկանց համար:

Բոլոր վերոյիշեալ գէպերում ստամոքսի երեւոյթները երբեմն այնքան աչքի են ընկնում, որ մոռացում է և հիմնական հիւանդութիւնը: Ստամոքսի յարատե բորբոքման ժամանակ անատոմիական փոփոխութիւնները վերաբերում են լորձաթաղանթին. վերջինը ուռչում է՝ տեղաեղ ստանալով մոխրագոյն կամ մուգ-կարմիր գոյն և ծածկում լորձունքի, և կամ ընդհակառակը՝ լորձաթաղանթը մաշտում, բարակում է, իսկ զեղձերը համարեա բոլորովին ոչնչանում են: Ստամոքսի հիւթի արտադրութիւնը խանգարուում է, իսկ դրա հետմիասին խանգարուում է նաև մարսողութիւնը:

Ընդհանրապէս ստամոքսի յարատե բորբոքման նշանները նոյնն են, ինչ որ սուր բորբոքմանը, միայն փոքր ինչ մեղմ են և արտայայտում են աստիճանաբար: Ամենից առաջ կորչում կամ փոխում է հիւանդի ախորժակը. նա քիչ ուտելուց յետոյ արգէն իրան կուշտ է զգում. բացի դրանից շատ անգամ նա առանձին ցանկութիւն է ունենում՝ աղի, թթու, կծու բաներ

ուտելու: Բերանում համ չի լինում կամ գառն է, լեզուն միշտ ծածկւած փառով, բերանից վատ հոտ է գալիս: Ստամոքսում հիւանդը առհասարակ զգում է ծանրութիւն, ճնշումն և երբեմն բութցաւ, մանաւանդ ուտելուց յետոյ: Սաստիկ ծանր և անախորժ նշաններից մէկն է զկոտոցը, որ երբեմն վատ հոտ է ունենում. բացի դրանից երբեմն զկոտալիս ստամոքսից բերանն է վերագառնում միքիչ թթու հեղուկ, որը առաջ է բերում ամբողջ որկորում սաստիկ այրուցի զգացմունք: Նոյնչափ անախորժ է նաև սրտախառնութիւնը, որ երբեմն վերջանում է ործկումով: Ործկալիս դուրս է գալիս չմարսուած սնունդ լորձունքի հետ խառը: Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ ործը մեծ մասամբ պատահում է հարբեցողների և ծխողների մէջ մանաւանդ առաւօտները: Ստամոքսն առհասարակ կապ է լինում. բայց երբեմն ստամոքսի բորբոքումը տարածւում է նաև աղիքների վրայ, որի հետեանքը լինում է ստամոքսի անկանոնութիւն—երբեմն լուծ, երբեմն փորկապութիւն: Այդ բոլոր անկանոնութիւնները ի հարկէ անհետեանք չեն կարող մնալ օրգանիզմի ընդհանուր դրութեան վրայ. վաղ թէ ուշ հիւանդը թուլանում, մաշտում, գունատում է: Յաճակառաջ է գալիս գլխապտոյա, գլխացաւ, սրտի բարախում, ջղայնութիւն, հոգեկան անհանգստութիւն

ևայն: Հիւանդը կորցնում է աշխատելու ընդու-  
նակութիւնը, նա տիսուր է, դանդաղ և կասկածու:

Հիւանդութեան ընթացքը երկարատեէ լինում.  
շատ անգամ տեսում է մի շարք տարիներ՝ երբեմն  
քիչ լաւանալով, երբեմն աւելի ևս վատանալով:  
Յամենայն դէպս ստամոքսի յարատեքորբումը  
չափից գուրս յամառ հիւանդութիւն է, որ պա-  
հանջում է լուրջ բժշկութիւն և համապատաս-  
խան պահեցողութիւն. Այդ դէպքում միայն ստա-  
մոքսի բորբոքումը մեծ մասամբ բուժելի է դառ-  
նում, եթէ նա հետեանք չէ օրդանիզմի որևէ  
լուրջ հիւանդութեան:

Եթէ ստամոքսի յարատեք բորբոքումը հե-  
տեանք է որևէ ուրիշ հիւանդութեան, պէտք է  
աշխատել դեռ այդ հիմնական հիւանդութիւնը  
բուժել, և առհասարակ ամենից առաջ հարկաւոր  
է հեռացնել հիւանդութեան պատճառը. Եթէ որ  
պատճառը հարբեցողութիւնն է, ճաշարանների  
վատ կերակուրը, փչացած ատամները, ևայն,  
բաւական է ձեռք վերցնել խմելուց, առողջարար  
սնունդ ստանալ, բուժել ատամները, որպէսզի դրա-  
նով արդէն զգալի փոփոխութիւն ստացուի: Ընդ-  
հանրապէս պէտք է իմանալ, որ պահեցողութիւնը  
աւելի մեծ նշանակներիւն ունի, քան դեղերը:

Ով որ ստամոքսի յարատեք բորբոքումն ունի,  
նրա համար անհրաժեշտ են հետեեալ դիէտետիկ  
—առողջապահիկ կանոնները պահել.

1. Մաքուր պահել բերանն ու ատամները.
  2. Ուտել ծանր և լաւ ծամել.
  3. Ուտել չափաւոր, բայց յաճախ (օրը 4—  
5 անգամ).
  4. Խուսափել շատ տաք կամ սառը կերա-  
կրից և խմիչքներից.
  5. Խուսափել անչափ աղի, թթու, կծու,  
բաներից.
  6. Խուսափել գժուարամարս կերակուրներ և  
անպէտք մթերքներ գործածելուց, ինչպէս օր.  
կոշտ, վատ պատրաստած իւղոտ միս, բաղի, սագի  
միս, իւղոտ ձկներ, խոզի միս, մանանեխ, քացախ,  
իւղոտ պանիր, կծուահամ իւղ, փչացած մթերք-  
ներ, չհասած մրգեր, թաժայ հաց, կաղամբ, սոխ  
կայլն, ևայն.
  7. Խուսափել անչափ դինի, արաղ, ծխախոտ  
և քաղցրեղէն գործածելուց,
  8. Ուտել որոշեալ ժամանակ և որոշ ընդ-  
միջումներով.
  9. Ուտելուց յետոյ զբօսնել և ընդհակա-  
ռակը՝ խուսափել ծանր ֆիղիքական ու մտաւոր  
աշխատանքից և քնելուց.
  10. Ընթրել առնուազը 2—3 ժամ քնելուց  
առաջ:
- Ինչ վերաբերում է սնունդին, նա պէտք է  
մնի թեթև, դիւրամարս և բաւարար: Այստեղ

շատ անգամ մեղ օդնութեան են գալիս հիւանդի ցուցմունքները:

Հիւանդներից շատերը փորձով արդէն զիւտեն թէ ինչն է իրանց օգտաւէտ և ինչը վասակար: Բացի դրանից պրոֆ. Լէյբէխ (Leube) յաջողել է, չնորհիւ գիտական փորձերի, դասաւորել սննդական միջոցները աստիճանական կարգով՝ նրանց դիւրամարս լինելու տեսակէտից:

Անաւասիկ այդ դասաւորումը.

### I

Բուլիոն, կաթ, թարմ և թոյլ խաշած ձու, սուխարի, Albert-ի շաքարահաց (պеченье):

### II

Խաշած հորթի ուղեղ, եփած ձուտ, աղաւնի, մածուծիկ սուպեր, բրնձի կամ քարասերմի հատիկի (малая крупа) խաշիլ, եփած հորթի ոտքեր:

### III

Բիֆշտեքս սուկիից, հում ապուխտ (ветчина), գետնախնձորի պիւրէ, միքիչ սպիտակ քարթու հաց, կաթոճ կամ թէյ փորձի համար:

### IV

Տապակած հաւ, աղաւնի, եղջերուի միս, կագաւ, բոստբիւ արիւնոտ, տապակած հորթի միս, ոչ իւղոտ ձկներ (щука, форель, судакъ), մակարոն, միքիչ գինի:

Ի հարկէ Լէյբէյի այդ դասաւորումը միայն համառօտ օրինագիծ (схема) է և բժշկի պարտաւորութիւնն է՝ աչքի առաջ ունենալով ամեն մի հիւանդի առանձնայատկութիւնները, կրծատել կամ լայնացնել այդ դասաւորումը:

Սնունդից յետոյ առանձին նշանակութիւն ունի ստամոքսի լուացումը, մանաւանդ այն դէպքերում, որտեղ իրօք ստամոքսում գոյանում է բաւական քանակութեամբ լորձունք, կամ երբ ստամոքսում բնականից երկար է մնում չմարսուած կերակուր: Թեթև և միջակ դէպքերում ստամոքսի լուացումը կարճ ժամանակամիջոցում զգալի կերպով թեթևացնում է հիւանդի տանջանքները, ապա և բոլորովին առողջացնում նրան. ծանր դէպքերում հարկաւոր են, երկար լուացումներ, որոնք կարող են միայն կանգնեցնել հիւանդութիւնը:

Պէտք է խոստովանուել սակայն, որ այդպիսի բժշկութիւնը բաւական անսախորժ է հիւանդների համար և երբեմն մենք ստիպուած ենք լինում հրաժարուել նրանից:

Նոյն նպատակին ծառայում են և զանազան հանքային ջրերը, թէև նրանց նշանակութիւնը աւելի թոյլ է, քան լուացումներինը:

Որովհետեւ զանազան հանքային ջրերը տարբեր նշանակութիւն ունին, նրանց գործածութիւնը պէտք է լինի բժիշկների որոշմամբ:

Պահեցողութիւնը, առողջապահութիւնը, լուսացումներն ու հանքային ջրերը այն միջոցներն են, որոնցից մենք կարող ենք սպասել՝ եթէ ոչ հիմնական բժշկութիւն, գոնէ զգալի թեթևութիւն։ Ինչ վերաբերում է դեղերին, նրանց դերն է գլխաւորապէս բուժել հիւանդութեան առանձին նշանները, ինչպէս օր. ախորժակի բացակայութիւնը, գկոտոցը, այբուցը, ործը, ստամոքսի ցաւը, փորկապութիւնը, լուծը և այլն։

### ՍՏԱՄՈՔՍԻ ԹՈՒԼՈՒԹԻՒՆ (ΑΤΟΗΙЯ) ԵՒ ԸՆԴՀԱՅՈՒՄ

Ստամոքսի թուլութիւն ասելով մենք հասկանում ենք ստամոքսի շարժողական գործունէութեան (մկանների) թուլանալը, երբ նա անընդունակ է դառնում իւր ժամանակին կերածը փոխադրել դէպի աղիքները։

Ստամոքսը, ինչպէս մենք գիտենք, կարող է թոյլ լինել հէնց ծնուած օրից կամ այդ թուլութիւնը կարող է յետոյ առաջ դալ զանազան պատճառներից։

Ամենից յաճախ ստամոքսի թուլութեան պատճառը չափից աւելի ուտելի խմելն է։ Եթէ մենք ծանրաբեռնում ենք ստամոքսը այնպէս, որ նա չի կարողանում ժամանակին փոխադրել դէպի աղիքները իւր պարունակութիւնը, նա ձգւում է և թուլանում։

Դրա համար է որ այս հիւանդութիւնը շատ է պատահում հարբեցողների և բգլիկների մէջ։ Միւս կողմից անբաւարար սնունդը և զանազան հիւանդութիւնները, ինչպէս օր. սակաւ-արիւնութիւնը, տիֆը, թոքախաը ևայլն, թուլացնելով ամբողջ օրգանիզմը, կարող են թուլացնել և ստամոքսը։ Վերջապէս ստամոքսի զանազան ուրիշ հիւանդութիւնները, ինչպէս օր. կատարը, կլոր խոցը, քաղցկեղը, նոյնպէս կարող են ստամոքսի թուլութիւն առաջ բերել։ Հիւանդը, նոյնիսկ չափաւոր ուտելուց յետոյ էլ առնասարակ դգում է ստամոքսում ծանրութիւն և ճնշումն։

յաճախ զգացւում է այրուց և սրտախառնութիւն է ունենում, երբեմն էլ ործկում է։ Բուրու այդ երեսոյթները հեշտ կը լինի բացատրել, եթէ աչքի առաջ ունենանք այն, որ ստամոքսը ժամանակին չէ կարողանում դատարկել իւր մէջ պարունակածը։ Վերջինը երկար միջոց միալով ստամոքսում առաջ է բերում վերոյիշեալ երեսոյթները։

Հիւանդութեան ընթացքը երկարատև է։ Բժշկութիւնը մեծ մասամբ հնարաւոր է, եթէ միայն կարելի լինի հեռացնել հիւանդութեան հիմնական պատճառները։ հակառակ դէպիում հիւանդութիւնը հետզհետէ սկսում է զարգանալ և առաջ է գալիս ստամոքսի ընդլայնումն։

Ստամոքսի ընդլայնումն ասելով մենք հաս-

կանում ենք ստամոքսի ծաւալի մեծանալը: Ինչպէս յայտնի է, նորմալ ստամոքսի մէջ կարող է տեղաւորւել  $1\frac{1}{2}$ — $2$  լիտր ջուր, այն ինչ լայնացած ստամոքսը երբեմն կարող է տանել մօտ  $\frac{1}{2}$  վերը ջուր:

Հիւանդութեան պատճառները նոյնն են, ինչ որ ստամոքսի թուլութեան համար՝ այն տարբերութեամբ միայն, որ սկզբում այդ պատճառները ստամոքսի թուլութիւն են առաջ բերում և ապա թէ ընդլայնումն: Ամենից յաճախ ստամոքսի ընդլայնումն առաջ է գալիս, երբ նեղուած է լինում ստամոքսի ելքը, ինչպէս այդ պատճառում է կլոր խոցի, քաղցկեղի, ստամոքսի կատարի ժամանակ ևայլն, Բացառիկ դէպքերում միայն ստամոքսի ընդլայնումն առաջ է գալիս յանկարծակի. իսկ մեծ մասամբ նա զարգանում է հետզհետէ աննկատելի կերպով: Բնորոշ դէպքերում հիւանդի գանգատները համարեա նոյն են, ինչ որ ստամոքսի թուլութեան ժամանակ: Այստեղ ևս հիւանդն ուտելուց յետոյ ծանրութիւն և անախորժ զգացմունք է ունենում ստամոքսում, այլև զկոտոց, այրուց, ցաւ, սրտախառնութիւն և որ ամենից բնորոշն է՝ ահագին քանակութեամբ վերլուծւած բաներով ործկումն, որոնց մէջ կարելի է գտնել միքանի օր առաջ կերած ուտելիքների մնացորդները: Ործը առհասարակ սկսում է ուտելուց միքա

նի ժամ անց: Ստամոքսը դատարկուելուց յետոյ հիւանդը 1—2 օր քիչ-քիչ լաւ է զգում իրան, բայց շուտով նորից լցւում է ստամոքսը և դարձեալ սկսում են նոյն տանջանքները: Այդ բոլոր երեսյթները ի հարկէ անպատիժ չեն անցնում հիւանդի համար. նա հետզհետէ թուլանում, մաշւում է, հոգեկան դրութիւնը ձնշւում. առաջ է գալիս փորկապութիւն, գլխացաւ ևայլն. ի միջի այլոց պակասում է նաև մէզի քանակութիւնը: Պրոֆ. Boas-ի կարծիքով որքան քիչ է մէզը, այնքան սաստիկ է ստամոքսի ընդլայնումն: Հիւանդութեան ընթացքը մեծ մասամբ երկարատես է. կարճ ու անբուժելի է այն դէպքերում, երբ ստամոքսի ընդլայնումը առաջ է գալիս ելքի քաղցկեղի պատճառով:

Եթէ ստամոքսի ընդլայնումն առաջ է եկել ելքի նեղուելու պատճառով, միակ բժշկութիւնը օպերացիան է, բոլոր միւս դէպքերում՝ լինի դաստամոքսի թուլութիւն թէ ընդլայնումն, առաջին տեղը բոնում են պահեցողութիւնն ու առողջապահութիւնը:

Հիւանդը պէտք է խուսափի շատ ուտել-խըմելուց, մանաւանդ գազով խմիչքներ գործածելուց, նա պէտք է քիչ-քիչ բայց յաճախ ուտէ: Օրուան ընթացքում խմել կարող է ոչ աւելի, քան 6—7 բաժակ, հաշւելով միասին ջուրը, թէյը կաթը, գինին ևայլն:

Ինչ վերաբերում է սնունդի յատկութեանը,  
եթէ միայն ստամոքսի արտադրական փունկցիան  
նորմալ է, նա կարող է բազմազան լինել՝ կաթ,  
ձու, կարագ, միս, միքիչ խմորեղէն, բանջա-  
րեղէն, մրգեր, ևայլն:

Չափից դուրս լաւ և անհրաժեշտ միջոց է  
բժշկութեան համար ստամոքսի լուացումը: Մի  
քանի լուացումներից յետոյ արդէն հիւանդը ա-  
հագին թեթևութիւն է զգում: Զկոտոցը, այրուցը,  
սրտախառնութիւնը, ործը ևայլն պակասում կամ  
նոյն իսկ բոլորովին անհետանում են. հիւանդի  
ախորժակը բացառում է, ընդհանուր դրութիւնը  
զգալի կերպով լաւանում, փորկապութիւնն ան-  
հետանում: Իսկ այդ բոլորը բացարւում է նրա-  
նով, որ ստամոքսն ազատուելով փաման և վեր-  
լուծման ենթարկւած կերակրի մնացորդներից,  
աւելի ընդունակ է դառնում՝ թէ ծծելու և թէ  
փոխադրելու կերակուրը դէպի աղիքները: Բայց  
եթէ միայն դրանով չի լաւանում հիւանդի դրու-  
թիւնը, այն ժամանակ պէտք է դիմել ուրիշ օ-  
ժանդակիչ միջոցների. դրանք են՝ մասսամը, ե-  
լեքտրականութիւնը, ջրաբուժութիւնը ևայլն:  
Հիւանդութեան առանձին նշանների դէմ մենք  
տալիս ենք նաև զանազան դեղեր: Ծանր դէպ-  
քերում, երբ բոլոր վերոյիշեալ միջոցները ա-  
պարդիւն են անցնում, հիւանդին տանջանքնե-  
րից ազատելու միակ ելքը—օպերացիան է:

### ՍՏԱՄՈՔՍԻ ԿԼՈՐ ԽՈՅՑ

Ստամոքսի կլոր խոցը այնքան էլ հազւագիւտ  
հիւանդութիւն չէ, մանաւանդ եթէ աչքի առաջ  
ունենանք այն հանգամանքը, որ դէպքերի որոշ  
մի մասը մեզ համար մութ է մնում: Հիւան-  
դութիւնը այդ անունն ստացել է այն պատճա-  
ռով, որ խոցը մեծ մասամբ՝ ճիշտ որ կլոր ձև է  
ունենում: Ամենից յաճախ կլոր խոցը պատա-  
հում է ստամոքսի ելքի մօտ, մանաւանդ ետևի  
մասում: Հիւանդութեան պատճառը գեռես հիմ-  
նովին որոշւած չէ. հաւանական է, որ կլոր խոցը  
առաջ է գալիս ստամոքսի լորձաթաղանթի մաս-  
նակի ինքնամարսողութիւնից:

Ամենից յաճախ այդ հիւանդութիւնը պատա-  
հում է կանանց մէջ, այն էլ երիտասարդ հա-  
սակում: Արեան պակասութիւն ունեցող կամ  
թոյլ մարդիկ աւելի տրամադրի են այդ հիւան-  
դութեանը, բան ուրիշները: Ուշագրութեան ար-  
ժանի է այն հանգամանքը որ հարթեցողներն ու  
խոհարարները, որոնց ստամոքսը շարունակ գըր-  
գուում է ալկօնօլով և տաք կերակուրների համը  
փորձելով, աւելի շատ են հիւանդանում:

Անատօմիական փոփոխութիւնները կայա-  
նում են նրանում, որ ստամոքսի այս կամ այն  
մասում առաջ է գալիս խոց: Սկզբում խոցի ազ-  
գեցութեանը ենթարկում է միայն լորձաթա-

ղանթը, ապա մկանների շերտը, երբեմն էլ նաև շիճուկային (серозный) շերտը: Կենդանութեան ժամանակ հիւանդութիւնը երբեմն ոչնչով չի արտայայտում և միայն անդամահատելիս մենք տեսնում ենք կլոր խոցի հետքերը, իսկ մեծ մասմբ նա բնորոշ նշաններ է ունենում, որոնց շնորհիւ մենք կարողանում ենք ճիշտ զիգզօզ դնել: Հիւանդութեան ամենագլխաւոր և մշտական նշաններից մէկն է ստամոքսի ցաւը (подложечная боль): Այդ ցաւը առհասարակ սկըսում է 1—2 ժամ ուտելուց յետոյ և շատ սուր բնաւորութիւն է ունենում. կարծես ինչ որ կըտրում, ծակում, այրում են ներսը. Սաստիկ ցաւից հիւանդը այս ու այն կողմն է ընկնում, փոխում է դիրքը, աշխատելով թեթևացնել իւր տանձանքը: Հետաքրքիր է որ երբեմն այդ նրան յաջողում է և ցաւն ընդհատում կամ պակասում է. երեկի այդ կախուած է խոցի դիրքից:

Յաւից յետոյ երկրորդ տեղը բռնում է ործկումը. ործկումն առհասարակ պատահում է սաստիկ ցաւերից յետոյ. ինքնըստինքեան այդ ործկումը այնքան էլ բնորոշ չէր լինի կլոր խոցի համար, եթէ արիւն գալը չլինէր:

Շատ դէպքերում փսխածի հետ դուրս է դալիս բաւականին քանակութեամբ արիւն: Այդ արիւնախառն ործկումը անպայման հիւանդութեան ամենագլխաւոր նշաններից մէկն է կազ-

մում: Միքանի դէպքերում արիւնը փոխանակ փսխածի հետ դուրս գալու, անցնում է դէպի աղիքները: Դրա շնորհիւ մարդու կղկղանքըներկւում է սկ գոյնով և կարի նմանութիւն ստանում: Աղջրային թթուուտի արտադրումը մեծ մասամբ աւելացած է լինում: Բնորոշ ցաւը և արիւնախառն ործկումը—ահա այն երկունշանները, որոնց շնորհիւ մենք մեծ մասամբ կարողանում ենք որոշել հիւանդութիւնը: Մնացած նշանները, որոնք են զկուտոցը, այրուցը, փորկապութիւնը ևայլն, միայն երկրորդական նշանակութիւն ունին:

Հիւանդութեան ընթացքն առհասարակ երկարատես է. հիւանդութիւնը կարող է տեսել տասնեակ տարիներ. խոցը կարող է լաւանալ, բայց նրա տեղը կարող են երեան գալ՝ մէկը միւսի ետեկից նոր խոցեր:

Ինչպէս տեսնում, ենք ստամոքսի կլոր խոցը լուրջ հիւանդութիւն է. թէկ մեծ մասամբ նայաջող ընթացք է ստանում, բայց և այնպէս լինում են բաւականաչափ դէպքեր, երբ նա վերջանում է յանկարծակի մահով: Մի շարք ուրիշ դէպքերում այդ հիւանդութիւնը զանազան բարդութիւններ է առաջ բերում, ինչպէս, օրինակ՝ ապիներ ստամոքսում, արեան պակասութիւն ևայլն:

Ստամոքսի կլոր խոցը պահանջում է չափից

դուքս պգոյշ բժշկութիւն. նայելով թէ որ շրջանումն է գտնւում հիւանդութիւնը, զրա համեմատ էլ լինելու է նաև բժշկութիւնը: Եթէ, օր. հիւանդութիւնը սուր շրջանումն է, մանաւանդ երբ հիւանդը արիւնախառն ործ է ունեցել, ամենից լաւը հանգստութիւնն ու դիէտան է: Հիւանդը պէտք, է որչափ կարելի է, անշարժ պառկի անկողնում: Առաջի 2—3 օրը սնունդը պէտք է տալ կիստիրների միջոցով, որպէսզի ստամոքսը չենթարկւի որևէ գրգռման: Այդ շրջանում աւելի լաւ է խուսափել ոչ միայն ուտել խմելուց, այլև ներքին դեղեր գործածելուց: Սաստիկ ծարաւութեան ժամանակ կարելի է մաքուր սառուց ծծել:

2—3 օրից յետոյ կարելի է հիւանդին քիչ-քիչ սառը կաթ տալ իսկ յետոյ, երբ նրա դրութիւնը փոքր քիչ լաւանայ, նաև բուլիօն, մածուծիկ սուպեր, Nestle-ի ալիւր, սանատօգէն, ձու և այլն:

1—2 շաբաթից յետոյ կարելի է դրանց վրայ աւելացնել պաքսիմաթ (сухари), շաքարահաց, բուլիկի, եփած հորթի ուղեղ, ոչ-իւղալի ձկներ, ճուտի միս և այլն, ապա թէ գրանցից յետոյ անցնել ուրիշ թեթև կերակուրներին:

Երկար ժամանակ, երբեմն նոյնիսկ ընդմիշտ, հիւանդները պէտք է խուսափեն հում միրգ և բանշարեղէն գործածելուց, անչափ՝ թթու, կծու,

աղի կերակուրներից, իւղալի կերակուրներից, շատ տաք կամ սառը խմիչք-ներից ևայլն: Մեծ մասամբ այդ միջոցներն արգէն բաւական են, որպէսզի խոցը ինքն ի-րան լաւանայ:

Բայց երբեմն էլ զանազան հանգամանքնե-րից դրդած մենք ստիպուած ենք լինում ստա-մոքսի կլոր խոցը բժշկել նաև դեղերով:

Բացի դրանից մենք գեղեր նշանակում ենք հիւանդութեան զանազան նշանների դէմ: Անչափ յամառ դէպքերում առաջարկւած է օպերատիւ բժշկութիւն:

### ՍՏԱՄՈՔՍԻ ՔԱՂՅԱԿԵԴ (բակъ)

Քաղցկեղ ասելով մենք հասկանում ենք այնպիսի ուռոյցներ, որոնք զարգանում են մարմ-նի զանազան մասերում, շուտ աճում և մաշում հիւանդին: Բացի դրանից, երեալով մարմի որևէ մասում, նրանք անցնում են հարեան մասերին: Թէ ինչպէս և ինչից են առաջանում այդ ուռոյցները, գեռես հաստատ յայտնի չէ: Յայտ-նի է միայն, որ այդ հիւանդութիւնը չնչին բա-ցառութեամբ, երեսում է 40—60 տ. հասակում:

Ամենից յաճախ քաղցկեղը զարգանում է ստամոքսում. բոլոր այս տեսակ հիւանդութիւն-

ների 40% մօտաւորապէս ընկնում է ստամոքսի վրայ։ Ստամոքսի քաղցկեղը մեծ մասամբ սկզբում է ծածուկ կերպով։ Հիւանդութեան նշանները առաջ են գալիս որոշ ժամանակից յետոյ միայն և սկզբում յիշեցնում են մեզ ստամոքսի յարատե բորբոքումն։

Ուտելուց յետոյ հիւանդը ստամոքսում ինչ որ անախորժ զգացմունք և ծանրութիւն է ունենում։ Ախորժակը տարօրինակ է, նա յաճախ զկոտում է. նրա սիրտը երբեմն խառնում է, լեզուն ծածկում է փառով։

Հետեւաբար հիւանդութեան սաստկանալու հետ սաստկանում են նաև հիւանդի գանգատները։ Նրա ախորժակը բոլորովին կորչում է. կերակուրները, մանաւանդ միսը, զզուանք են պատճառում։ Հիւանդը ստամոքսում յաճախ ցաւ է զգում, որ կապ չունի ուտելու հետ։ Արտախառնութիւնը մեծ մասամբ վերջանում է ործով։ Փոխածը առհասարակ բաղկացած է լինում լորձունքից և կերակուրների մնացորդներից, բայց երբեմն դրանց խառնուում էնաև արիւն ևնա ստանում է բնորոշ գոյն։ Արիւնը դուրս է գալիս իոցուուած ուռոյցից և, ենթարկւելով ստամոքսի թթու հիւթի ազգեցութեանը, սև սուրճի գոյն է ստանում. դրա շնորհիւ փոխածը ևս նոյն մութ գոյնն է ունենում։

Բայց ամենից բնորոշը՝ ստամոքսի քաղցկե-

դի համար հիւանդի ընդհանուր պատկերն է. — հիւանդը սաստիկ մաշւում, գունատւում է, նրա մորթին ստանում է մի տեսակ տարօրինակ՝ կարծես հողի գոյն։

Օբիէտիւ նշաններից առաջի տեղը բռնում է ուռոյցը, որը մենք յաճախ շօշափում ենք, թէկ ոչ հիւանդութեան սկզբին։ Բացի այն երկոյթներից, որոնք լինում են ստամոքսի կողմից, կարող են առաջ գալ նորերը, եթէ ուռոյցը, ինչպէս յաճախ պատահում է, անցնում է մարմնի հարևան մասերի վրայ։ Այդ պատճառով երբեմն առաջ է գալիս դեղնութիւն, ջրգողութիւն, գեղձերի ուռոյց ևայլն։

Ստամոքսը առհասարակ կապ է լինում. երբեմն միայն կարող է և լուծ լինել։ Հիւանդութիւնը մեծ մասամբ տեսում է մօտաւորապէս 1—2 տարի. օր օրի վրայ հիւանդը մաշւում, ուժապառ է լինում և մահանում։ Հիւանդին բըժշկել մենք դժբաղդաբար դեռ ևս անկարող ենք։

Ամենայաջող դէպքում, կռուելով հիւանդութեան զանազան նշանների դէմ և թեթեացնելով հիւանդի տանջանքները, մենք գուցէ միքանի ամսով երկարացնենք նրա կեանքը. քիչ աւելի յոյս տալիս է օպերացիան, մանաւանդերը նա կատարւում է հիւանդութեան սկզբին։

Այդ դէպքում երբեմն յաջողւում է երկարացնել հիւանդի կեանքը միքանի տարով, թէկ

վերջիվերջոյ հիւանդութիւնը կրկնւում է և տառնում գէպի մահ:

Այսպէս թէ այնպէս՝ հիւանդին հարկաւոր է նպատակայարմար սնունդ տալ:

Այդպիսի հիւանդների համար ամենից վնասակարը իւղալի բաներ ուտելն է:

Կարելի է ուտել—բուլիօն, մածուծիկ սուպեր, եփած ձուտ, աղաւնի, հորթի ոտքեր, ուղեղ, բիֆշտէքս, կաթ, մածուն, կեֆիր, պաքսիմաթ, շաքարահաց, պիւրէ գետնախնձորից, սպանաղ, ծնեբեկ, հասած մըզեր, կամ կօմպօտ, քիչ բայց լաւ գինի կամ կրնեակ ևայլն:

Երբեմն, երբ հիւանդի ստամոքսը ոչ մի բան չի ընդունում, մենք դիմում ենք սննդարար կլիստիրների, այսինքն՝ սնունդ ենք տալիս հիւանդին աղիքից:

**ՍՏԱՄՈՔՍԻ ԶՂԱՅԻՆ ԿԱՄ ՖՈՒՆՑԻՕՆԱԼ  
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԵՐԸ (հերզոզ)**

Ստամոքսի ջղային հիւանդութիւնները, իբրև ինքնուրոյն հիւանդութիւններ, պատահում են շատ քիչ դէպքերում միայն: Առհասարակ նրանք առաջ են գալիս կողմանկի միջոցով զանազան ուրիշ հիւանդութիւնների ժամանակ: Այդ դէպքերում իսկապէս գոյութիւն ունին ստամոքսի կողմից զանազան նշաններ, իսկ հիւանդութիւնը բոլորովին ուրիշ է: Սակայն ստամոքսի գործունէութիւնը երբեմն այնչափ խանգարւում և այնչափ բնորոշ է լինում, որ իսկական հիւանդութիւնը նսեմանում է հիւանդութեան ընդհաննուր պատկերի մէջ: Հիւանդի ու բժշկի ուշադրութիւնը գլխաւորապէս դառնում է ստամոքսի վրայ: Այդ տեսակէտից ստամոքսի ջղային հիւանդութիւնները արժանի են առանձին ուշադրութեան:

Մենք կը նկարագրենք ստամոքսի ջղային հիւանդութիւններից միքանիսը միայն, որոնք աւելի յաճախ են պատահում:

## ԶՂԱՅԻՆ ԶԿՈՏՈՅ

Զկոտոցը առհասարակ որոշ չափով բնական երևոյթ է և յաճախ պատահում է բոլորովին առողջ մարդկանց մէջ ևս: Դա այն օդն է, որ մենք կուլ ենք տալիս ամենից շատ ուտելիքների և խմիչքների հետ: Զկոտոցը ախտավանական է դառնում, երբ նա երևում է պարբերաբար, բոլորորին անկախ ուտելուց և ուղեկցում է բարձր ձայներով: Եթէ մենք յիշենք՝ որպիսի սերտ կապ կայ ստամոքսի և ամբողջ ջղային համակարգութեան մէջ, այն ժամանակ հասկանալի կը լինի թէ ինչու ստամոքսի զանազան նեվրօգները պատահում են գլխաւորապէս ջղային հիւանդների մէջ: Զղային զկոտոցը ևս ամենից յաճախ պատահում է հիստերիկների և նեվրասթենիկների մէջ:

Հիւանդութիւնն առաջ է գալիս առհասարակ հոգեկան յուզմունքից յետոյ, ինչպէս, օր, ահը, սարսափը, վիշտը, ուրախութիւնը, կորուսը և այլն:

Հիւանդութիւնը բնորոշւում է նրանով, որ պարբերաբար սկսւում է անընդհատ զկոտոցը օդով, որ մեծ ոյժով դուրս է նետում ստամոքսից:

Զկոտոցն առհասարակ սկսւում է ուտելուց անկախ, մեծ մասամբ երեկոները և երեխն

տեսում է ամբողջ գիշերը՝ հիւանդին զրկելով քնից: Այդպիսի հիւանդները թէ իրանք են տանջւում և թէ շրջապատողներին ձանձրացնում:

Զկոտոցից առաջ հիւանդները ցաւ ու ծանրութիւն են զգում ստամոքսում: Ախորժակը կապւում է, վլուխը ծանր է լինում ևայլն: Բոլորը Փյու երևոյթները անհետանում են, հէնց որ վերջանում է զկոտոցը:

Թէև զղային զկոտոցը ծանր հիւանդութիւն չէ, բայց և այնպէս նրա հիմնովին բժշկութիւնը կասկածելի է: Յաճախ հիւանդութիւնը ինքն իրան անհետանում է, որպէսզի որոշ ժամանակից յետոյ նորից երևայ:

Բոլոր առաջարկուած միջոցներից առաջին տեղը բոնում են ներշնչումը և հիմնական հիւանդութիւնների — հիստերիայի և նեվրասթենիայի բժշկութիւնը:

## ԶՂԱՅԻՆ ՈՐԾԿՈՒՄՆ

Զղային ործի պատճառները շատ բազմատեսակ են: Այդ հիւանդութիւնը մեծ մասամբ առաջ է գալիս իբրև ցոլացումն զանազան հիւանդութիւնների ժամանակ, ինչպէս, օր՝ որպայնի, երիկամունքների, աղիքների ևայլն: Բացի դրանից նա առաջ է գալիս ուղեղի հիւան-

դութիւնների, գաշտանի, յղութեան և զանագան ջղային հիւանդութիւնների ժամանակ: Բոլոր այդ դէպքերում ստամոքսը ինքն ըստ ինքեան կարող է բոլորովին առողջ լինել: Զղային ործը կարող է երեալ թէ ուտելուց յետոյ և թէ ուտելուց առաջ. իսկ միքանի դէպքերում նա երկում է բացառապէս առաւտները քաղցած ժամանակ:

Եթէ ջղային ործի համար կայ որեէ բընորոշ նշան, այդ այն է, որ շատ անգամ ործը առանց սրտախառնութեան է լինում: Հիւանդի լեզուն մաքուր է, ախորժակը լաւ, ստամոքսում առհասարակ ոչ մի ցաւ չի զգում: Հիւանդութիւնն սկսում է յանկարծ, առանց որեէ նկատելի պատճառի. ոչ պահեցողութիւնը, ոչ նոյնիսկ ոչինչ չուտելը չեն ազատում հիւանդին ործից: Այդպէս ործը տանջում է հիւանդին միքանի ժամանակ և յանկարծ ընդհատում է, որպէսզի յետոյ նորից երեայ:

Մի շարք ուրիշ դէպքերում ջղային ործը սկսում է մտաւոր յոգնածութիւնից յետոյ և գլխաւորապէս պատահում է աշակերտների մէջ: Հիւանդութիւնն սկսում է յանկարծ. հիւանդը գունատում, գլխի, ստամոքսի ցաւ է ըզգում, ապա սիրտը խառնում և նա ործկում է:

Զղային ործկումն մէկ անգամ սկսւելով կարող է օրեր, ամիսներ, նոյնիսկ տարիներ

տևել, երեան գալով ամեն օր, նոյնիսկ օրը միքանի անգամ: Երբեմն նա բոլորովին աննկատելի կերպով անհետանում է քիչ թէ շատ երկար ժամանակով, բայց յետոյ նորից երեւմ:

Բժշկութիւնը կախւած է նրանից, թէ հնարաւոր է արդեօք գտնել և հեռացնել հիմնական պատճառը: Եթէ այդ հնարաւոր է լինում, բժշկութիւնը ևս գառնում է հնարաւոր և հեշտ: Բարեբաղդաբար այդ հիւանդութիւնը մեծ մասմբ անցնում է ինքնիլան:

Մեր ձեռք առած բազմաթիւ միջոցները թեթևացնում են միայն հիւանդի տանջանքները:

## ՍՏԱՄՈՔՍԻ ԶՂԱՅԹԻՆ ՑԱՒ

Ստամոքսի զանագան հիւանդութիւնները նկարագրելիս մենք տեսանք, որ համարեամիշտ էլ տեղի է ունենում ստամոքսի ցաւ: Այդ կախուած է այն փոփոխութիւններից, որոնք գոյանում են ստամոքսում:

Այլ բան է ստամոքսի ջղային ցաւը, որի ժամանակ կարող է ոչ մի փոփոխութիւն չլինել ստամոքսի կողմից: Այդ ցաւը՝ բացառապէս ջղային բնաւորութիւնունեցող ցաւ է, ինչպէս, օր. «միգրէն» անուն կրող գլխացաւը: Հիւան-

դութեան պատճառները մեծ մասամբ անյայտ են: Յայտնի է միայն, որ այդ հիւանդութիւնը ամենից յաճախ պատահում է արեան պակասութիւն և թոյլ կազմուածք ունեցողների մէջ. բացի դրանից ստամոքսի ջղային ցաւը շատ անգամ պատահում է՝ լեարդի, երիկամունքների, միզապարկի, կանանց, զանազան ջղային հիւանդութիւնների, ջերմի ժամանակ ևայլն: Հիւանդութիւնն առհասարակ սկսում է յանկարծ ստամոքսի սաստիկ ցաւով: Հետաքրքիր է որ ստամոքսի թեթև շօշափումից անգամ սաստիկանում է ցաւը և ընդհակառակը՝ պինդ սեղմելուց թեթևանում:

Ջղային ցաւը տարբեր է լինում. երբեմն տևում է միայն միքանի ըոսպէ, երբեմն միքանի ժամից յետոյ հաղիւ է անցնում. բայց ընդհատւելով՝ նորից երևում է միքանի ժամանակից յետոյ և միայն ծանր դէպքերում է երևում ամեն օր, նոյնիսկ օրը միքանի անգամ կրկնուում: Եթէ ստամոքսի ջղային ցաւը որևէ լուրջ հիւանդութեան հետևանք չէ, նա կարող է բոլորովին անցնել. իսկ ծանր դէպքերում, երբ հիւանդութիւնը ամեն օր է պատահում և երկար ժամանակ տևում, սաստիկ խանգարւում է հիւանդի առողջութիւնը: Ինչ վերաբերում է բժշկութեանը, այստեղ ևս մենք ամենից առաջ աշխատում ենք հեռացնել հիւանդութեան պատ-

ճառը: Բայց եթէ դա մեզ չի յաջողւում կամ եթէ պատճառը մեզ անյայտ է մնում, այն ժամանակ մենք գործադրում ենք ստամոքսի տաք լուացումներ, ելեքտրականութիւն, մասսաժ, ջրաբուժութիւն ևայլն:

### ՍՏԱՄՈՔՍԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆԵՎՐՈԶՆԵՐ

Մենք արդէն գիտենք, որ ստամոքսում կան գեղձեր, որոնք արտադրում են ստամոքսի հիւթը: Դիաղոլութիւնները ցոյց են տուել, որ մեր նեարդերի և գեղձերի գործունէութեան մէջ որոշ կապ կայ: Այսպէս օր. ապացուցւած է, որ եթէ շանը միս են ցոյց տալիս, նրա ստամոքսի գեղձերն սկսում են արդէն հիւթ արտադրել:

Ընդհակառակ՝ սարսափը կամ զգուանքը կարող են դանդաղացնել ստամոքսի հիւթի արտադրումը: Երբ այս կամ այն պատճառով խանգարւում է վերոյիշեալ կապը, խանգարւում է նաև գեղձերի արտադրումը. մէկ կողմից ստամոքսում արտադրում է սովորականից աւելի աղջրային թթուուտ (соляная кислота), միւս կողմից թթուուտի արտադրումը կարող է սովորականից շատ քիչ լինել: Աղջրային թթուուտի սովորականից աւելի արտադրումը, որ Hyperacidity անունն է կրում, պատահում է կոր խո-

ցի, հիստերիայի, ջղերի թուլութեան (հևրաստեհիա), մելանխոլիայի ժամանակ ևայլն։ Բացի դրանից այդ հիւանդութիւնը, իբրև ըեփլեկտոր երկոյթ, նկատում է լեարդի, երիկամունքների և այլ հիւանդութեան ժամանակ։

Հիւանդն առհասարակ սաստիկ շատ է զգում ստամոքսում, այրուց և թթու զկուտոց է ունենում։ Յաճախցաւի ժամանակ հիւանդը ործկում է։ Թէև ախորժակը լաւ է լինում, շատ անդամնոյնիսկ սաստկացած, բայց ստամոքսը մեծ մասամբ կապէ լինում։ Հիւանդութեան ընթացքը երկարաւուն է։ բժշկութիւնը կախւած է հիմնական հիւանդութիւնից։

Առաջին տեղը բժշկութեան ժամանակ բըռունում է պահեցողութիւնը։ Նպատակայարմար է տալ հիւանդին՝ կաթ, ձու, միս, սուպեր, կարագ, թարմ խաշած ձկներ, ծաղկաւոր կաղամբ, սպանաղ, սպիտակ քարթու հաց, թէյ, կակաօ ևայլն։

Ընդհակառակը պէտք է արգելել՝ ալկօհօլային խմիչքներ և թէ վատ իւղով պատրաստած կերակուրներ, ձէթ, խմորեղէն կերակուրներ, գետնախնձոր, թթու կերակուրներ, սուր սոսումներ, սալաթ, շաքարահաց ևայլն ուտելը։ Ինչ վերաբերում է դնդերով բժշկելուն, պէտք է ասել, որ այն ևս մեծ դեր է խաղում։ Դեղերով մնաք ոչ միայն հանգստացնում ենք շատ անդամ հիւանդի երբեմն անտանելի տանջանքները, այլև յաճախ

ամրացնում և հանգստացնում ենք հիւանդի ջրդերը, միևնոյն ժամանակ մեղմացնում նաև հիւանդութիւնը։ Բացի դրանից օգտաւէտ են նաև ստամոքսի լուացումները և հանքային ջրերի գործածութիւնը, որոնց մէջ առաջին տեղը բռնում է կարլսբադի ջուրը։

## ՍՏԱՄՈՔՍԻ ԶՂԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆ

Այդ հիւանդութիւնը շատ նման է ստամոքսի յարատև բորբոքմանը։ տարբերութիւնը կայանում է նրանում, որ առաջին դէպքում չի լինում ոչ անատոմիական, ոչ էլ օբիեկտիւ ֆունկցիօնալ խանգարումներ ստամոքսի կողմից։ Հիւանդութեան նշանները թէև առհասարակ սկըսում են ուտելուց յետոյ, բայց սնունդի յատկութեան կամ նրա քանակութեան հետ ոչ մի կապ չունին։ Այստեղ աւելի շատ դեր են խաղում զանազան հոգեկան յուզմունքները։

Ուտելուց յետոյ հիւանդը զկուտում է։ միայն այդ զկուտոցը ոչ վատ հոտ և ոչ էլ վատ համ է ունենում։ Յաճախ հիւանդը ճնշումն ու ծանրութիւն է զգում ստամոքսում։ Մը կայն խսկական սուր ցաւեր շատ քիչ է պատահում։ Լեզուն շատ անդամ փառապատ է լինում, բե-

ըանից վատ հոտ է գալիս, ախորժակը չափազնց տարօրինակ է. հիւանդը երբեմն բոլորովին չի ուզում ուտել, երբեմն էլ, ասեսթէ, գայլի ախորժակ է ունենում: Բացի զկոտոցից հիւանդը շատ անգամ այրուց, սրտախառնութիւն է ունենում, իսկ ստամոքսը մեծ մասամբ կապ է լինում: Այդ բոլորին աւելանում են նաև զլխացաւ, գլխապտոյտ, ընդհանուր թուլութիւն:

Ենչառութիւնը դժուարանում է, սիրաը բարախում. հիւանդի քունը անհանգիստ է, արամադրութիւնը վատ: Հիւանդութեան համար չափազնց բնորոշ է այն, որ այդ բոլոր գանգատները համարեա անհետանում են, երբ հիւանդի ուշադրութիւնը մի այլ բանի վրայ է դարձած լինում, օր. երբ նա գտնուում է ուրախ շրջանում: Այդ դէպքում նա կարծես բոլորովին մոռանում է հիւանդութիւնը. ընդհակառակը՝ երբ հիւանդի տրամադրութիւնը վատ է, կամ երբ նա ենթարկում է այս կամ այն հոգեկան յուղմուն. քի ազգեցութեան, նըս հիւանդութիւնը իւր բոլոր ոյժով երեան է գալիս: Բացի դրանից ստամոքսի ջղային բորբքման համար ընորոշ է և այն, որ ստամոքսի կողմից մենք չենք գտնում ոչ մի խանգարումն: Ստամոքսի թէ արտադրական և թէ շարժողական գործունէութիւնը մընում է նորմալ:

Հիւանդութիւնը մեծ մասամբ թաքուն կեր-

պով է սկսում. բացի ընդհանուր ջղայնութիւնից, հիստերիայից, հիւանդութեան պատճառ կարող են լինել ջերմը, սակաւարիւնութիւնը, երիկամունքների, թոքերի, սեռական գործարանների և այլ հիւանդութիւնները: Շատ ծիելն ու խմելը նոյնպէս կարող են այդ հիւանդութիւնն առաջացնել: Հիւանդութեան ընթացքը յարատե է. բժշկութիւնը հնարաւոր է այն դէպքերում միայն, երբ կարելի է լինում գտնել և հեռացնել հիմական պատճառը: Սակայն մեծ մասամբ մենք գործ ունինք այնպիսի անձանց հետ, որոնք բացի ստամոքսի խանգարումներից, ունին նաև ընդհանուր ջղայնութիւն, ահա ինչու միաժամանակ կարիք է լինում բժշկել և ջղերը: Դրա համար բացի դեղերից օգտաւէտ է օդափոխութիւնը, հանգստութիւնը սովորական պարապմունքներից, ջրաբուժութիւնը, ելեքտրականութիւնը ևայլն: Ի՞նչ վերաբերում է սնունդին—բացի գրգռիչ ուտելիքներից ու խմիչքներից— հիւանդին ամեն ինչ կարելի է տալ: Մեր միակ նպատակը պէտք է լինի՝ որչափ կարելի է, շատ կերակրել հիւանդին:

---

ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱ. ԿՈՄ ՆԱԽԱԶԳՈՒԻՇԱՅՈՒՑԻՉ  
ՄԻՋՈՑՆԵՐ

Ինչպէս տեսանք, ստամոքսի հիւանդութիւնները մեծ մասամբ առաջ են գալիս այնպիսի վը-

նասակար ազգեցութիւններից, որոնցից հեշտ կը լինէր խուսափել, եթէ միայն արգելք չհանդիպանային երկու նշանաւոր ֆակտորներ—աղքատութիւնը և տգիտութիւնը։ Այդ վասակար ազգեցութիւնները, ինչպէս յայտնի է, գլխաւորապէս վերաբերում են մնունդի որակութեանն ու քանակութեանը։

1. Մնունդի քանակութիւնը ոչ միայն նըշանակութիւն ունի ստամոքսի նորմալ գործունէութեան, այլև ամբողջ կազմուածքի համար։ Չափից դուրս շատ ուտելը՝ ծանրացնում, լայնացնում է ստամոքսը, հետեապէս նաև աղիքները և փուռմն է առաջացնում։ Չափից դուրս քիչ ուտելը՝ ընդհակառակը, վասում է ոչ միայն կազմուածքի ընդհանուր մնունդին, այլև շնորհիւն բանց՝ ստամոքսն ու աղիքները անգործունէութեան են դատապարտում։ Մնունդի քանակութեան հետ սերտ կապ ունի այն հարցը, թէ մարդօրուայ ընթացքում քանի անգամ պէտք է ուտի։ Օրուայ մէջ մէկ անգամ ուտելը աննպատակայարժար է, որովհետեւ այդ կերպով մենք շատ կը ծանրաբեննէնք ստամոքսը։ Յաճախ ուտելը ևս աննպատակայարժար է, որովհետեւ այդ դէպքում ստամոքսը պէտք է անընդհատ աշխատի։ Ահա այստեղ մեղ օգնութեան է հասնում ախորժակը։ Նա մեղ ցոյց է տալիս, թէ նոր սը-

նունդ հարկաւոր է ընդունել այն ժամանակ միայն, եթէ ստամոքսը դատարկուած է լինում։ Կեանքը ցոյց է տուել, որ առողջ մարդու համար օրուայ ընթացքում հարկաւոր է ուտել 3—4 մնունդ։

2. Ուտելիքը պէտք է բոլորովին թարմ և լաւը լինի. փոման կամ ֆալսիֆիկացիայի ենթարկուած մթերքներից վասում է ստամոքսը։ Այդ տեսակէտից մեղ օգնութեան են հասնում հասարակական սանիտարական միջոցները, որոնց շընորհիւ մենք յաճախ ազատուում ենք զանազան մթերքների պատճառած վասից։

3. Ստամոքսը չպիտի ենթարկուի մեքենայական, քիմիական և ջերմազգեցիկ գրգռումների։ Այսինքն կերակուրը չպէտք է անչափ կոշտ, սուր յատկութիւն ունենայ, շատ տաք կամ շատ սառը լինի։

4. Ուտելիս չպէտք է շտապել, այլ հարկաւոր է հանգարտ ուտել և մանաւանդ բերանի պատառը լաւ ծամել։

5. Միշտ ուշադիր լինել՝ ատամներն ու բերանը մաքուր պահելու։

6. Ուտելուց յետոյ ընդհանրապէս օգտաւէտ է թեթև շարժումներ անելը, ման գալը։

7. Ընթրիք պէտք է ուտել՝ առնուազը 2—3 ժամ քննելուց առաջ։

8. Պէտք է խուսափել չափից աւելի գինի,  
ծխախոտ և քաղցրաւենիք գործածելուց:

Ահա մօտաւորապէս այն կանոնները, ո-  
րոնց հեշտ կը լինէր հետեւ և այդպիսով  
շատ դէպքերում ստամոքսի հիւանդութիւններից  
ազատ մնալ, եթէ չինէին վերոյիշեալ Հ ֆակ-  
տորները — աղքատութիւնն ու տղիտութիւնը:  
Այդ է պատճառը, որ ստամոքսի հիւանդութիւն-  
ները մեծ մասամբ պատահում են աղքատների  
և տգէտների մէջ:

Զքաւորութեան պատճառով մարդիկ հնարա-  
ւորութիւն չեն ունենում բաւարարութիւն տալ  
իրանց սնունդին՝ ոչ քանակի, ոչ էլ յատկու-  
թեան տեսակէտից. Նրանց կերած մթերքները  
յաճախ փշացած են լինում կամ ֆալսիֆիկա-  
ցիայի ենթարկուած — կեղծուած: Միւս կողմից  
ունենոր բայց տգէտ մարդիկ յաճախ լրցնում են  
իրանց ստամոքսը՝ թէ աւելորդ և թէ գրգռիչ  
կերակութներով ու խմիչքներով, որոնք նոյնպէս  
առաջացնում են ստամոքսի հիւանդութիւններ:



## ՅԱՆԿ I.

ԿԵՆԴՐԱՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԵԱՆ պատկանող պիտուոր մննդական  
միջոցների % կազմը:

Գոյների նշանակութիւնը

Սպիտա- կուց	Իւղ	Օուայ կամ շաքար	Զուր

0 10 20 30 40 50 60 70 80 90 100



## I P U S H E

մայնաբան դուրսմի բանավոր մասնակութարանի մաքամարմին  
ունեալ . ։ Հյումանին

Հարց	Խաղաղ դաշտի նախարար	Առաջ և հաջող գործություններ	Առաջնական պարագաներ




ՑԱՆԿ II.

Բուսական թագաւորութեան պատկանող զիսաւոր սննդական միջների ٪ կազմը:

Գոյների նշանակութիւնը

Ապիտաւ- կուց	Իւղ	Օսլայ կամ շաքար	Խորշաւ- նիւթ	Զուր



नाम	संख्या	उत्तराधिकारी	प्रधान	उपर्युक्त



6121

*U t p u s h u s n k p b u t f*

## ՀՈՅԱ ԵՒ ՏԵՍԵԼ



ԳԻՒՆ Է 15 ԿՈՊ.